ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/1087/02/25 ք. Երևան
12 Փետրվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ԳԵՆԿՈՆ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

«ԳԵՆԿՈՆ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ընկերության՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ընկերության ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման 30.12.2024թվականի թիվ 1 արձանագրությամբ հայտարարված թիվ «ԵԱ-ԳՀԾՁԲ-24/65» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «ԳԵՆԿՈՆ» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին:

Քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով դատավորի աշխատակազմին հասանելի է դարձել 07.02.2025թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն

ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ընկերությունից պետք է պահանջել «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ընկերության ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման 30.12.2024թվականի թիվ 1 արձանագրությամբ հայտարարված թիվ «ԵԱ-ԳՀԾՁԲ-24/65» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «ԳԵՆԿՈՆ» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«ԳԵՆԿՈՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ընկերության՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ընկերության ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման 30.12.2024թվականի թիվ 1 արձանագրությամբ հայտարարված թիվ «ԵԱ-ԳՀԾՁԲ-24/65» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «ԳԵՆԿՈՆ» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ընկերությունից պահանջել դատարան ներկայացնել «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ընկերության ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման 30. 12.2024թվականի թիվ 1 արձանագրությամբ հայտարարված թիվ «ԵԱ-ԳՀԾՁԲ-24/65» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրությամբ՝ «ԳԵՆԿՈՆ» ՍՊ ընկերության

հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲ ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4.Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի մարտի 25-ին:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան Digitally signed by NAIRA AVETISYAN

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am